ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

2019 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության մայոր, Գարիկ Խուդոյանը (էլ. փոստ՝ varchakan@ro.ru):

Ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության գնդապետ, Վլադիմիր Ավագիմյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության մայոր, Աբգար Մարգարյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ոստիկանության պրակտիկայի և տեսության համատեղումը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2012-2021 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է 10-ից ավելի ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, բազմաթիվ գիտական հոդվածներ, ամբիոնի դասախոսները մասնակցել են ոստիկանության կառավարման բնագավառին առնչող տարբեր գիտական գործնական կոնֆերանսների և քննարկումների:

Ամբիոնի դասավանդվող առարկաներից են՝

- ՀՀ վարչական իրավունք
- ՀՀ վարչական դատավարության իրավունք
- Ոստիկանության վարչական գործունեություն
- Ստորաբաժանումների կառավարում
- ՀՀ ֆինանսական իրավունք

- Համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպում
- Վարչական պատասխանատվությունը ՀՀ-ում
- Իրավունքի հիմունքներ և այլ: